Երկրորդ փուլի պետ
Ա. Մանասյանին
Ա. [signature]

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

Համայնքի վարչական սահմաններում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգվում է համայնքի գլխավոր հատակագծով, քաղաքաշինական գոտևորման նախագծով, ինչպես նաև համակցված տարածական պլանավորման փաստաթղթով :

Գոտևորման նախագիծը, հանդիսանալով քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ սահմանում է համայնքի տարածական զարգացման մանրամասն պայմանները՝ համայնքում ընդգրկված բնակավայրերի տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջներն ու սահմանափակումները՝ կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

Գոտևորման նախագծի դրույթները հիմք են հանդիսանում քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար:

Որպես առանձին փաստաթուղթ մշակվող գոտևորման նախագծի առաջադրանքը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից կազմված և համայնքի ավագանու կողմից սահմանված կարգով հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա, համայնքի ղեկավարի պատվերով՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման իրավունք ունեցող անձանց հետ կնքված նախագծային կապալի պայմանագրով:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագիծը ամբողջությամբ չի պարունակում քաղաքաշինական գոտևորման նախագիծ, առաջացել է անհրաժեշտություն փոփոխել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր 6 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը, մասնավորապես՝ նախատեսել Էջմիածին քաղաքի ամբողջ բնակավայրի գոտևորման հատակագծի նախագիծ և հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն՝ քաղաքի հետագա հեռանկարային զարգացման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը անհրաժեշտ է ներկայացնել ավագանուն որոշման նախագիծ՝ գոտևորման նախագծի և հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների առաջադրանքները մշակելու համաձայնություն տալու մասին:

Հարգանքով՝

Աշխատակազմի քաղաքաշինություն և
հողաշինության բաժնի պետ [signature] Ռ.Մարտիրոսյան